

Խորհրդի 1992 թվականի հունիսի 24-ի 92/58/ԵՏՀ հրահանգ

Աշխատավայրում անվտանգության և առողջության վերաբերյալ ցուցանակների տեղադրման նվազագույն պահանջների մասին (89/391/ԵՏՀ հրահանգի 16(1) հոդվածում նշված իններորդ առանձին հրահանգ)

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ,

հաշվի առնելով «Եվրոպական տնտեսական համայնքի հիմնադրման մասին» պայմանագիրը, և, մասնավորապես, դրա 118(ա) հոդվածը,

հաշվի առնելով Հանձնաժողովից ստացված առաջարկը (1), որը ներկայացվել է աշխատավայրում անվտանգության, հիգիենայի և առողջության պահպանման հարցերով խորհրդատվական կոմիտեի հետ խորհրդակցելուց հետո,

համագործակցելով Եվրոպական պառլամենտի հետ (2),

հաշվի առնելով Տնտեսական և սոցիալական հարցերով կոմիտեի եզրակացությունը(3),

քանի որ Պայմանագրի 118(ա) հոդվածով նախատեսվում է, որ Խորհուրդը հրահանգների միջոցով պետք է ապահովի նվազագույն պահանջներ՝ ուղղված հատկապես աշխատանքային միջավայրի բարելավմանը աշխատողների առողջության ու անվտանգության մասով,

քանի որ, համաձայն այդ հոդվածի, նման հրահանգներով պետք է ձեռնպահ մնալ այնպիսի վարչական, ֆինանսական ու իրավական սահմանափակումներ սահմանելուց, որոնք կխոչընդոտեն փոքր և միջին ձեռնարկությունների ստեղծումն ու զարգացումը,

քանի որ աշխատավայրում անվտանգությանը, հիգիենային և առողջությանը վերաբերող իր ծրագրի մասին Հանձնաժողովի հաղորդագրության մեջ (4) նախատեսվում է Խորհրդի 1977 թվականի հուլիսի 25-ի «Աշխատավայրում անվտանգության ցուցանակների տեղադրմանը վերաբերող անդամ պետությունների օրենքների, կանոնակարգերի և վարչական ակտերի համապատասխանեցման մասին» 77/546/ԵՏՀ հրահանգի շրջանակների վերանայում և երկարացում,

քանի որ Խորհուրդը 1987 թվականի դեկտեմբերի 21-ի «Աշխատավայրում անվտանգության, հիգիենայի և առողջության մասին» իր բանաձևում (6) անդրադարձել է Հանձնաժողովի մտադրությանը՝ կարճ ժամանակահատվածում առաջարկ ներկայացնել վերը նշված հրահանգի վերանայման ու ընդլայնման վերաբերյալ,

քանի որ 77/576/ԵՏՀ հրահանգը պետք է փոխարինվի սույն Հրահանգով՝ ներդաշնակության և հստակության նկատառումներից ելնելով,

քանի որ սույն Հրահանգը «Աշխատավայրում աշխատողների անվտանգության և առողջության բարելավումը խթանելուն ուղղված միջոցառումների ներդրման մասին» 1989 թվականի հունիսի 12-ի 89/391/ԵՏՀ հրահանգի 16(1) հոդվածում (7) նշված առանձին հրահանգ է, և քանի որ 89/391/ԵՏՀ հրահանգի դրույթները, այսպիսով, ամբողջությամբ կիրառվում են աշխատավայրում անվտանգության և առողջության վերաբերյալ ցուցանակների տեղադրման նկատմամբ՝ չխախտելով սույն Հրահանգի առավել խիստ և (կամ) հատուկ դրույթները,

քանի որ Համայնքում գործող կանոնները հիմնականում վերաբերում են անվտանգության վերաբերյալ ցուցանակներին և վտանգավոր խոչընդոտներին ու վայրերին և, հետևաբար, սահմանափակվում են ցուցանակների տեսակների որոշ թվով,

քանի որ այս սահմանափակման թողած ազդեցությունն այն է, որ որոշ վտանգներ համապատասխանորեն նշված չեն, և քանի որ այսուհետ պետք է նոր տեսակի ցուցանակներ էլ ներառել, որպեսզի գործատուներն ու աշխատողները կարողանան նշմարել և խուսափել աշխատավայրում իրենց անվտանգությանը և (կամ) առողջությանը սպառնացող վտանգից,

քանի որ անվտանգությանը և (կամ) առողջությանը վերաբերող ցուցանակները պետք է տեղադրվեն այնտեղ, որտեղ վտանգները չեն կարող պատշաճ կերպով նվազեցվել կոլեկտիվ պաշտպանական եղանակներով կամ աշխատանքի կազմակերպման ընթացքում օգտագործվող միջոցներով, եղանակներով կամ ընթացակարգերով,

քանի որ ներկայումս անդամ պետություններում օգտագործվող անվտանգության և (կամ) առողջության վերաբերյալ ցուցանակների միջև առկա բազում տարբերությունները անորոշություն են առաջացնում, և այս հանգամանքը կարող է ավելի լայն տարածում ստանալ ներքին շուկայում աշխատողների ազատ տեղաշարժի արդյունքում,

քանի որ աշխատավայրում օգտագործվող ստանդարտացված ցուցանակների օգտագործումը, ընդհանուր առմամբ, կարող է նվազեցնել աշխատողների միջև լեզվական և մշակութային տարբերություններից առաջացող վտանգները,

քանի որ սույն Հրահանգով էական քայլ է կատարվում՝ ուղղված ներքին շուկայի սոցիալական ուղղվածության զարգացմանը,

քանի որ Իսպանիայի և Պորտուգալիայի «Անդամակցության մասին» ակտով փոփոխված 74/325/ԵՏՀ որոշման համաձայն (8), Աշխատավայրում անվտանգության, հիգիենայի և առողջության պահպանման հարցերով խորհրդատվական կոմիտեի հետ Հանձնաժողովը խորհրդատվություն պետք է անցկացնի՝ այս բնագավառում առաջարկ մշակելու նպատակով,

ԸՆԴՈՒՆԵՑ ՍՈՒՅՆ ՀՐԱՀԱՆԳԸ.

ԲԱԺԻՆ I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1

Կարգավորման առարկան

1. Սույն Հրահանգը, որը իններորդ անհատական հրահանգն է 89/391/ԵՏՀ հրահանգի 16(1) հոդվածի իմաստով, սահմանում է աշխատավայրում անվտանգության և առողջության վերաբերյալ ցուցանակների տեղադրման նվազագույն պահանջները:

2. Սույն Հրահանգը չի կիրառվում վտանգավոր նյութերի ու պատրաստուկների, ապրանքների և (կամ) սարքավորումների շուկա դուրս բերման ցուցանակների առումով, եթե Համայնքի մյուս դրույթներով հատուկ հղում չի արվել դրա վերաբերյալ:

3. Սույն Հրահանգը չի կիրառվում այն ցուցանակների նկատմամբ, որոնք օգտագործվում են կարգավորելու համար ճանապարհային, երկաթուղային, ներքին ջրուղիներով շարժող, ծովային կամ օդային տրանսպորտը:

4. 89/391/ԵՏՀ հրահանգի դրույթներն ամբողջությամբ կիրառվում են 1-ին պարբերության մեջ նշված ամբողջ տարածքում՝ չխախտելով սույն Հրահանգի առավել խիստ և (կամ) հատուկ դրույթները:

Հոդված 2

Սահմանումները

Սույն Հրահանգի նպատակներով՝

ա) անվտանգության և (կամ) առողջության վերաբերյալ ցուցանակ նշանակում է հատուկ առարկայի, գործողության կամ իրավիճակի վերաբերյալ ցուցանակ, որը տեղեկություն կամ հրահանգներ է պարունակում աշխատավայրում անվտանգության և (կամ) առողջության վերաբերյալ, ցուցատախտակների, գույնի, լուսավորվող ցուցանակի կամ լսողական ազդանշանի, բանավոր հաղորդակցություն կամ ձեռքի ազդանշանի օգնությամբ՝ կախված հանգամանքներից,

բ) արգելող ցուցանակ նշանակում է հնարավոր վտանգ առաջացնող կամ պատճառող վարքագիծն արգելող ցուցանակ,

գ) նախազգուշական ցուցանակ նշանակում է ռիսկի կամ վտանգի մասին նախազգուշացնող ցուցանակ,

դ) պարտադիր ցուցանակ նշանակում է առանձնահատուկ վարքագիծ սահմանող ցուցանակ,

ե) վթարային ելքի կամ առաջին օգնության ցուցանակ նշանակում է վթարային ելքերի, առաջին օգնության կամ փրկարարական միջոցների մասին տեղեկություն պարունակող ցուցանակ,

զ) տեղեկատվական ցուցանակ նշանակում է (բ)–(ե) կետերում նշված տեղեկություններից բացի այլ տեղեկատվություն տրամադրող ցուցանակ,

է) ցուցատախտակ նշանակում է երկրաչափական ձևի, գույների և խորհրդանիշերի կամ գրաֆիկական պատկերների միջոցով հատուկ տեղեկատվություն պարունակող ցուցանակ, որը տեսանելի է դարձվում բավարար ինտենսիվություն ունեցող լուսավորությամբ,

ը) լրացուցիչ ցուցանակ նշանակում է (ե) կետում նշված ցուցանակներից որևէ մեկի հետ օգտագործվող և լրացուցիչ տեղեկատվություն պարունակող ցուցանակ,

թ) անվտանգություն խորհրդանշող գույն նշանակում է հատուկ նշանակություն ունեցող գույն,

ժ) խորհրդանիշ կամ գրաֆիկական պատկեր նշանակում է մի պատկեր, որի վրա նկարագրվում է մի իրավիճակ կամ որը սահմանում է առանձնահատուկ վարքագիծ և որն օգտագործվում է ցուցատախտակի կամ լուսավորվող մակերևույթի վրա,

ժա) լուսավորվող ցուցանակ նշանակում է թափանցիկ կամ կիսաթափանցիկ նյութերից պատրաստված սարքով աշխատող ցուցանակ, որոնք լուսավորվում են ներսից կամ հետևից այնպես, որ լուսավորվող մակերևույթի տպավորություն թողնեն,

ժբ) լսողական ազդանշան նշանակում է կողավորված ձայնային ազդանշան, որն արձակվում կամ հաղորդվում է տվյալ նպատակի համար նախատեսված սարքով և մարդու կամ արհեստական ձայնի կիրառում չի պահանջում,

ժգ) բանավոր հաղորդակցություն նշանակում է նախապես որոշված խոսակցական հաղորդագրություն, որը հաղորդակցվում է մարդու կամ արհեստական ձայնի միջոցով,

ժդ) ձեռքի ազդանշան՝ կողավորված ձևով բազուկների և (կամ) ձեռքի շարժում և (կամ) դիրք՝ աշխատավայրում ներկա մարդկանց համար վտանգ ներկայացնող գործողություններ իրականացնող աշխատողներին ուղղորդելու համար.

ԲԱԺԻՆ II. ԳՈՐԾԱՏՈՒՆԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոդված 3

Ընդհանուր կանոնները

1. Գործատուները պետք է տեղադրեն անվտանգությանը և (կամ) առողջությանը վերաբերող ցուցանակներ, ինչպես նշված է սույն Հրահանգում, այն դեպքերում, երբ վտանգը հնարավոր չի շրջանցել կամ պատշաճ կերպով նվազեցնել կոլեկտիվ պաշտպանական եղանակներով կամ աշխատանքի կազմակերպման ընթացքում օգտագործվող միջոցներով, եղանակներով կամ ընթացակարգերով, կամ պետք է երաշխավորեն, որ այս տեսակի ցուցանակները տեղադրված լինեն:

Գործատուները պետք է հաշվի առնեն 89/391/ԵՏՀ հրահանգի 6(3)(ա) հոդվածի համաձայն կատարված ցանկացած ռիսկի գնահատում:

2. Չխախտելով V հավելվածի դրույթները՝ ավտոճանապարհային, երկաթուղային, ներքին ջրուղիներով շարժվող, ծովային և օդային տրանսպորտի համար կիրառվող ցուցանակներն այսպիսի տրանսպորտի համար պետք է, ըստ անհրաժեշտության, տեղադրվեն կազմակերպությունների և (կամ) ձեռնարկությունների ներսում:

Հոդված 4

Անվտանգության և (կամ) առողջության վերաբերյալ ցուցանակների առաջին անգամ օգտագործումը

Չխախտելով 6-րդ հոդվածի դրույթները՝ անվտանգության և (կամ) առողջության վերաբերյալ ցուցանակը, որը աշխատավայրում կիրառվում է առաջին անգամ 11 (1) հոդվածի առաջին ենթապարբերությամբ սահմանված ժամկետի օրը կամ այդ օրվանից հետո, պետք է բավարարի I-IX հավելվածներում նշված նվազագույն պահանջները:

Հոդված 5

Անվտանգության և (կամ) առողջության վերաբերյալ արդեն գործածվող ցուցանակները

Չխախտելով 6-րդ հոդվածի դրույթները՝ անվտանգության և (կամ) առողջության վերաբերյալ ցուցանակը, որն արդեն իսկ գործածվել է աշխատավայրում՝ նախքան 11 (1) հոդվածի առաջին ենթապարբերությամբ սահմանված ժամկետը, պետք է բավարարի I- IX հավելվածներում նշված նվազագույն պահանջները, այդ ժամկետից ոչ ուշ, քան տասնութ ամիս հետո:

Հոդված 6

Բացառություններ

1. Հաշվի առնելով գործողությունների տեսակները և (կամ) համապատասխան կազմակերպության մասշտաբները, անդամ պետությունները կարող են կազմակերպությունների կատեգորիաներ սահմանել, որոնց թույլատրվում է ամբողջովին, սույն Հրահանգով սահմանված լուսավորվող ցուցանակները և (կամ) լսողական ազդանշանները մասնակի կամ ժամանակավորապես փոխարինել այլընտրանքային միջոցներով, որոնք կապահովեն պաշտպանության նույն մակարդակը:

2. Անդամ պետությունները, աշխատողների և գործատուների հետ խորհրդակցելուց հետո, կարող են շեղում կատարել VIII հավելվածի 2-րդ բաժնի և (կամ) IX հավելվածի 3-րդ բաժնի կիրառումից, միևնույն ժամանակ սահմանելով պաշտպանության նույն մակարդակն ապահովող այլընտրանքային միջոցները:

3. Անդամ պետությունները, ազգային օրենքների և (կամ) գործելակերպի համաձայն, 1-ին պարբերությունը կիրարկելիս, խորհրդակցում են գործատուների և աշխատողների կազմակերպությունների հետ:

Հոդված 7

Տեղեկություններ և ցուցումներ աշխատողների համար

1. Չխախտելով 89/391/ԵՏՀ հրահանգի 10-րդ հոդվածը՝ աշխատողներին և (կամ) նրանց ներկայացուցիչներին պետք է տեղեկացնել աշխատավայրում անվտանգության ու առողջության վերաբերյալ ցուցանակների ուղղությամբ ձեռնարկվող բոլոր միջոցների մասին:

2. Չխախտելով 89/391/ԵՏՀ հրահանգի 12-րդ հոդվածը՝ աշխատողներին պետք է պատշաճ կերպով ցուցումներ տալ, մասնավորապես, անվտանգության և (կամ) առողջության ցուցանակների վերաբերյալ հատուկ ցուցումների ձևով:

Մասնավորապես, առաջին ենթապարբերության մեջ նշված ցուցումները պետք է վերաբերեն ցուցանակների նշանակության բացատրությանը, մասնավորապես այն ցուցանակների, որոնք ներառում են բառեր, ինչպես նաև վերաբերեն հաստատված ընդհանուր ու հատուկ վարքագծին:

Հոդված 8

Աշխատողների հետ քննարկումներ և աշխատողների մասնակցությունը

Աշխատողների և (կամ) նրանց ներկայացուցիչների հետ խորհրդակցությունը կամ նրանց կողմից մասնակցությունը սույն Հրահանգով կարգավորվող խնդիրներին տեղի է ունենում 89/391/ԵՏՀ հրահանգի 11-րդ հոդվածի համաձայն՝ ներառյալ I-IX հավելվածները:

ԲԱԺԻՆ IV. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 9

Հավելվածների համապատասխանեցումը

I-IX հավելվածների մասով կատարվող տեխնիկական բնույթի համապատասխանեցումները պետք է հաստատվեն՝ 89/391/ԵՏՀ հրահանգի 17-րդ հոդվածով սահմանված ընթացակարգի համաձայն, հաշվի առնելով՝

- աշխատավայրում անվտանգության և (կամ) առողջության վերաբերյալ ցուցանակների կամ սարքերի նախագծման ու արտադրության վերաբերյալ տեխնիկական ներդաշնակեցման և համապատասխանեցման մասին հրահանգների ընդունումը,

- տեխնիկական առաջընթացը, միջազգային կանոններում կամ հատկորոշումներում կատարված փոփոխություններն ու աշխատավայրում անվտանգության և (կամ) առողջության վերաբերյալ ցուցանակների ոլորտում գիտելիքների առաջընթացը:

Հոդված 10

1. 77/576/ԵՏՀ հրահանգն ուժը կորցրած է ճանաչվում 11(1) հոդվածի առաջին ենթապարբերության մեջ նշված ժամկետում:

Այնուամենայնիվ, 5-րդ հոդվածում նշված դեպքերում այդ հրահանգը շարունակում է կիրառվել այդ ժամկետից հետո առավելագույնը տասնութ ամիսների ընթացքում:

2. Ուժը կորցրած ճանաչված հրահանգին կատարված ցանկացած հղում վերաբերում է սույն Հրահանգի համապատասխան դրույթներին:

Հոդված 11

Եզրափակիչ դրույթներ

1. Անդամ պետությունները 1994 թվականի հունիսի 24-ից ոչ ուշ գործողության մեջ են դնում սույն Հրահանգի հետ համապատասխանությունն ապահովելու համար անհրաժեշտ օրենքներ, կանոնակարգեր և վարչական ակտեր:

Նրանք դրա մասին անմիջապես տեղեկացնում են Հանձնաժողովին:

2. Եթե անդամ պետություններն ընդունում են այդ ակտերը, ապա դրանք պետք է հղում պարունակեն սույն Հրահանգին կամ ուղեկցվեն նման հղումով՝ դրանց պաշտոնական հրապարակման դեպքում: Նման հղում կատարելու եղանակները սահմանվում են անդամ պետությունների կողմից:

3. Անդամ պետությունները Հանձնաժողով են ներկայացնում ներպետական իրավունքի դրույթների տեքստերը, որոնք արդեն իսկ ընդունվել կամ ընդունվում են սույն Հրահանգով կարգավորվող ոլորտում:

4. Անդամ պետությունները յուրաքանչյուր հինգ տարին մեկ անգամ սույն Հրահանգի դրույթների գործնական կիրառման վերաբերյալ հաշվետվություն են ներկայացնում Հանձնաժողով՝ ներկայացնելով գործատուների և աշխատողների տեսակետները:

Հանձնաժողովը տեղեկացնում է Եվրոպական պառլամենտին, Խորհրդին, Տնտեսական և սոցիալական հարցերով կոմիտեին ու Աշխատավայրում անվտանգության, հիգիենայի և առողջության պահպանման հարցերով խորհրդատվական կոմիտեին:

5. Հանձնաժողովը Եվրոպական պառլամենտ, Խորհուրդ ու Տնտեսական և սոցիալական հարցերով կոմիտե սույն Հրահանգի կիրառման վերաբերյալ պարբերական զեկույց է ուղարկում՝ հաշվի առնելով 1-4-րդ պարբերությունները:

Հոդված 12

Սույն Հրահանգը հասցեագրված է անդամ պետություններին:

Կատարված է Լյուքսեմբուրգում, 1992 թվականի հունիսի 24-ին:

Խորհրդի կողմից՝

Նախագահ Խոսե դա Սիլվա Պետեդա

1) ՊՏ թիվ C 53, 28.02.1991թ., էջ 46 և ՊՏ թիվ C 279, 26.10.1991թ., էջ 13: 2) ՊՏ թիվ C 240, 16.09.1991թ., էջ 102 և ՊՏ թիվ C 150, 15.06.1992թ., 3) ՊՏ թիվ C 159, 17.06.1991թ., էջ 9: 4) ՊՏ թիվ C 28, 03.02.1988թ., էջ 3: 5) ՊՏ թիվ L 229, 07.09.1977թ., էջ 12: Հանձնաժողովի 79/640/ԵՏՀ հրահանգով վերջին անգամ փոփոխված: (OJ No L 183, 19. 7. 1979, p. 11.)(6) OJ No C 28, 3. 2. 1989, p. 1.(7) OJ No L 183, 29. 6. 1989, p. 1.(8) OJ No L 185, 9.7.1974, p.15.(ՊՏ թիվ L 183, 19. 07.1979 թ., էջ 11) 6) ՊՏ թիվ C 28, 03.02. 1989թ., էջ 1: 7) ՊՏ թիվ L 183, 29. 06. 1989 թ., էջ 1: 8) ՊՏ թիվ L 185, 09. 07. 1974 թ., էջ 15:

ԱՇԽԱՏԱՎԱՅՐՈՒՄ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՎ (ԿԱՄ) ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՑՈՒՑԱՆԱԿՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

1. Նախնական դիտարկումներ

1.1. Այն դեպքերում, երբ հրահանգի 3-րդ հոդվածի ընդհանուր կանոնից ելնելով պահանջվում են առողջության և (կամ) անվտանգության վերաբերյալ ցուցանակներ, ապա դրանք պետք է համապատասխանեն II-IX հավելվածներում նշված հատուկ պահանջներին:

1.2. Սույն հավելվածում ներկայացվում են այդ պահանջները, նկարագրվում է անվտանգության և (կամ) առողջության վերաբերյալ ցուցանակների կիրառումը տարբեր դեպքերում և սահմանվում են ցուցանակների փոխարինելիության ու համակցման ընդհանուր կանոններ:

1.3. Առողջության և (կամ) անվտանգության վերաբերյալ ցուցանակները պետք է կիրառվեն միայն հրահանգում նշված նախազգուշացումը կամ տեղեկությունը փոխանցելու համար:

2. Ցուցանակների տեսակները

2.1. Մշտական ցուցանակներ

2.1.1. Մշտական ցուցանակները կիրառվում են արգելող, նախազգուշացնող և պարտադիր պահանջներ արտահայտող նշանների, վթարային անցուղիների ու առաջին օգնության համար նախատեսված հարմարությունների տեղը ցույց տվող նշանների համար:

Ցուցատախտակները և (կամ) անվտանգության գույները պետք է կիրառվեն հրդեհի մարման սարքավորումները և դրանց տեղը մշտապես ցույց տալու համար:

2.1.2. Կոնտեյներների և խողովակների վրա ցուցատախտակները տեղադրվում են III հավելվածի համաձայն:

2.1.3. Այն վայրերը, որտեղ առկա է խոչընդոտների բախվելու կամ վայր ընկնելու ռիսկ, մշտապես պետք է նշվեն անվտանգության գույներով և (կամ) ցուցատախտակներով:

2.1.4. Երթևեկության ուղիները մշտապես նշագրվում են անվտանգության գույներով:

2.2. Ժամանակավոր ցուցանակներ

2.2.1. Լուսավորվող ցուցանակները, ծայնային ազդանշանները և (կամ) բանավոր հաղորդակցությունը կիրառվում են ըստ անհրաժեշտության՝ հաշվի առնելով 3-րդ բաժնում նշված ցուցանակները մեկը մյուսով փոխարինելու և համադրման հնարավորությունները, վտանգի մասին զգուշացնելու, հատուկ գործողությունների անցնելու և վթարային տարհանման համար մարդկանց կանչելու նպատակով:

2.2.2. Ձեռքի ազդանշանները և (կամ) բանավոր հաղորդակցությունները կիրառվում են ըստ անհրաժեշտության՝ վտանգավոր աշխատանքներ իրականացնող անձանց գործողությունները ուղղորդելու համար:

3. Միմյանց փոխարինող և համադրելի նշանները

3.1. Ստորև նշվածներից յուրաքանչյուրը կարելի է կիրառել այն դեպքում, եթե այն հավասարապես արդյունավետ է՝

- խոչընդոտ կամ վայր ընկնելու վտանգ պարունակող վայրերում՝ անվտանգության գոյն կամ ցուցատախտակ,

-լուսավորվող ցուցանակներ, ձայնային ազդանշաններ կամ բանավոր հաղորդակցությունները,

- ձեռքի ազդանշաններ կամ բանավոր հաղորդակցություններ:

3.2. Ցուցանակների որոշ տեսակներ կարող են կիրառվել միասին.

-լուսավորվող ցուցանակներ և ձայնային ազդանշաններ,

-լուսավորվող ցուցանակներ և բանավոր հաղորդակցություն,

- ձեռքի ազդանշաններ և բանավոր հաղորդակցություն:

4. Ստորև նշված աղյուսակում նշված ցուցումները կիրառվում են անվտանգության գոյն պարունակող բոլոր ցուցանակների նկատմամբ.

Գոյն

Նշանակություն կամ նպատակ

Ցուցումներ և տեղեկատվություն

Կարմիր

Արգելող ցուցանակ

Վտանգավոր վարքագիծ

Վտանգի ահազանգ

Դադար, անջատում, վթարային անջատման սարքեր

Տարհանում

Հակահրդեհային սարքավորումներ

Սարքավորումների առկայություն և դրանց տեղի նշում

Դեղին

կամ

Սաթե

Նախազգուշական ցուցանակ

Զգուշանալ, ձեռնարկել նախազգուշական միջոցներ

Ստուգել

Կապույտ

Պարտադիր ցուցանակ

Հատուկ վարքագիծ կամ գործողություն

Կրել անձնական պաշտպանական հանդերձանք

Կանաչ

Վթարային ելք, առաջին օգնության ցուցանակ

Դռներ, ելքեր, անցուղիներ, սարքավորումներ, հարմարություններ

Վտանգ չկա

Վերադարձ բնականոն վիճակին

5. Անհրաժեշտ է, որպեսզի նշանի արդյունավետությունը բացասաբար չանդրադառնա՝

5.1. միևնույն տեսակի լուսավորության աղբյուրի առկայությունը, որը խանգարում է տվյալ նշանի տեսանելիությանը կամ լսելիությանը, և հետևաբար՝

5.1.1. պետք է խուսափել չափից ավելի մոտ գտնվող բազմաթիվ ցուցանակներ տեղադրելուց,

5.1.2. պետք չէ կիրառել երկու լուսավորվող ցուցանակներ միառժամանակ, որոնք կարող են շփոթություն առաջացնել,

5.1.3. լուսավորվող ցուցանակը պետք չէ կիրառել մեկ այլ նման լուսային աղբյուրի հարևանությամբ,

5.1.4. երկու ձայնային ազդանշաններ պետք չէ կիրառել միառժամանակ,

5.1.5. ձայնային ազդանշան պետք չէ կիրառել, եթե արտաքին աղմուկը չափից ավելի բարձր է,

5.2. պետք չէ կիրառել անորակ նախազգուշակիչ, ոչ բավարար թվով, սխալ տեղադրված, վատ վերանորոգված կամ սխալ գործառույթների համար ծառայող ցուցանակներ կամ ազդանշանային սարքեր:

6. Ըստ պահանջի, ցուցանակներն ու ազդանշող սարքերը պետք է պարբերաբար մաքրվեն, պահպանվեն, ստուգվեն, վերանորոգվեն և, անհրաժեշտության դեպքում, փոխարինվեն նորով՝ դրանց ներհատուկ և (կամ) գործառնական հատկանիշների պահպանումն ապահովելու նպատակով:

7. Նշանների կամ ազդանշող սարքավորումների թիվը և տեղադրման դիրքը կախված են դիսկի կամ վտանգի լրջության աստիճանից կամ համապատասխան տարածքի չափերից:

8. Էլեկտրականության որևէ ձևով սնուցվող ցուցանակները պետք է հոսանքազրկման դեպքում ապահովվեն հոսանքի վթարային մատակարարմամբ՝ մինչ էլեկտրաէներգիայի խանգարումների վերացումը:

9. Լուսավորվող ցուցանակների և (կամ) ձայնային ազդանշանի միացումը ցույց է տալիս, թե երբ է սկսվում պահանջվող գործողությունը. նշանը կամ ազդանշանը պետք է ակտիվացված մնա այնքան ժամանակ, որքան պահանջվում է տվյալ գործողության համար:

Լուսավորվող ցուցանակներն ու ձայնային ազդանշանները օգտագործելուց անմիջապես հետո պետք է նորից ակտիվացվեն:

10. Լուսավորվող ցուցանակների և ձայնային ազդանշանների աշխատանքն ու արդյունավետությունը պետք է ստուգվի ինչպես նախքան օգտագործումը, այնպես էլ հետագայում՝ ողջամիտ պարբերականությամբ:

11. Եթե տվյալ տարածքում աշխատող մարդկանց լսողությունը կամ տեսողությունը նորմայից ցածր է, այդ թվում՝ անհատական պաշտպանության միջոցներ կրելու հետևանքով, ապա պետք է միջոցներ ձեռնարկել՝ լրացուցիչ ցուցանակներ կիրառելու կամ տվյալ նշանները փոխարինելու համար:

12. Վտանգավոր նյութերի կամ պատրաստուկների զգալի քանակությունների պահեստավորման համար օգտագործվող տարածքները, սենյակները կամ պահեստները պետք է նշվեն II հավելվածի 3.2. բաժնում նշված համապատասխան նախազգուշական նշանով կամ նշնարվեն III հավելվածի 1-ին բաժնով սահմանված կարգով, բացառությամբ այն դեպքերի, երբ առանձին փաթեթների կամ կոնտեյներների պիտակավորումը տվյալ նպատակի համար բավարար է:

**ՑՈՒՑԱՏԱԽՏԱԿՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ 1.
Բնորոշ առանձնահատկությունները**

1.1. Ցուցատախտակների ձևն ու գույները սահմանվում են 3-րդ բաժնում՝ հաշվի առնելով կոնկրետ օբյեկտը (արգելող, նախազգուշացնող և պարտադիր գործողություն պահանջող, վթարային ելք, վթարային կամ հակահրդեհային սարքավորումներ նշանակող ցուցատախտակներ):

1.2. Գրաֆիկական պատկերները պետք է լինեն հնարավորինս պարզ և պետք է պարունակեն միայն էական մանրամասնությունները:

1.3. Գրաֆիկական պատկերները կարող են փոքր ինչ տարբեր կամ ավելի մանրամասն լինել 3-րդ բաժնում նշվածներից, պայմանով, որ դրանք արտահայտեն միևնույն իմաստը, իսկ տարբերությունները կամ փոփոխությունները որևէ կերպ չաղավաղեն այն:

1.4. Ցուցատախտակները պետք է պատրաստված լինեն հարվածադիմացկուն և եղանակադիմացկուն նյութից, որը համապատասխանում է շրջապատող միջավայրի պայմաններին:

1.5. Ցուցատախտակների չափսերը, գունային և ֆոտոմետրիկ հատկանիշները պետք է ապահովեն ցուցանակների տեսանելիությունն ու հստակ ընկալվող իմաստը:

2. Կիրառման պայմանները

2.1. Ցուցանակները պետք է, տեսանելիության դաշտին համապատասխան, տեղադրվեն հարմար դիրքով և բարձրության վրա, հաշվի առնելով ցանկացած խոչընդոտ կամ ընդհանուր վտանգի դեպքում դրանք պետք է տեղադրվեն տվյալ տարածքի մուտքի մոտ կամ հատուկ վտանգին կամ առարկային անմիջապես հարող տարածքում, լավ լուսավորված, հեշտ հասանելի և տեսանելի տեղում:

Չխախտելով 89/654/ԵՏՀ հրահանգի դրույթները՝ բնական թույլ լուսավորության դեպքում ցուցանակների վրա օգտագործվում են ֆոսֆորեսցենտ գույներ, արտացոլող նյութեր կամ արհեստական լուսավորություն:

2.2. Ցուցանակը պետք է հեռացվի այն ժամանակ, երբ համապատասխան իրավիճակը դադարում է:

ԿՈՆՏԵՅՆԵՐՆԵՐԻ ԵՎ ԽՈՂՈՎԱԿՆԵՐԻ ՎՐԱ ՏԵՂԱԴՐՎՈՂ ՆՇԱՆՆԵՐԸ

1. Աշխատավայրում 67/548/ԵՏՀ (¹) և 88/379/ԵՏՀ (²) հրահանգներում սահմանված վտանգավոր նյութերի կամ պատրաստուկների համար կիրառվող կոնտեյներները, ինչպես նաև վտանգավոր նյութերի կամ պատրաստուկների պահեստավորման նպատակով օգտագործվող կոնտեյներները, վտանգավոր նյութեր կամ պատրաստուկներ պարունակող կամ փոխադրող խողովակների հետ միասին պիտակավորվում են (գունավոր ֆոնի վրա՝ գրաֆիկական պատկերի կամ սիմվոլի տեսքով) այդ հրահանգներին համաձայն:

1-ին պարբերության պահանջները չեն կիրառվում կարճ ժամանակահատվածով օգտագործվող, ինչպես նաև հաճախ փոփոխվող պարունակությամբ կոնտեյներների վրա, պայմանով, որ ձեռնարկվեն մասնավորապես տեղեկացման և (կամ) ուսուցման համարժեք այլընտրանքային միջոցառումներ, որոնք երաշխավորում են նույն մակարդակի պաշտպանվածությունը:

1-ին պարբերությունում նշված պիտակները կարող են՝

- փոխարինվել II հավելվածում սահմանված նախազգուշական ցուցանակներով՝ կիրառելով նույն գրաֆիկական պատկերները կամ սիմվոլները,

- դրանց կից ներկայացվեն լրացուցիչ տեղեկություններ, օրինակ՝ վտանգավոր նյութի կամ պատրաստուկի անվանումը և (կամ) բանաձևը՝ վտանգի բացատրությամբ,

- կիրառվել աշխատավայրում կոնտեյներների փոխադրման համար, որոնք լրացվել կամ փոխարինվել են վտանգավոր նյութերի կամ պատրաստումների փոխադրման համար Համայնքի տարածքում կիրառելի ցուցանակներով:

2. Ցուցանակները պետք է տեղադրվեն.

-տեսանելի կողմ(եր)ով,

-ոչ թեքուն, ինքնակաշուն կամ ներկված ցուցանակի տեսքով:

3. Ըստ անհրաժեշտության՝ սույն հավելվածի 1-ին բաժնում նշված ցուցանակները պետք է օժտված լինեն II հավելվածի 1.4. բաժնում նշված բնորոշ առանձնահատկություններով և պետք է բավարարեն II հավելվածի 2-րդ պարբերությամբ սահմանված ցուցատախտակների կիրառման պայմանները:

4. Չխախտելով 1-ին, 2-րդ, և 3-րդ բաժինները՝ խողովակների վրա կիրառվող պիտակները պետք է տեսանելիորեն տեղադրվեն ամենավտանգավոր հատվածների, օրինակ՝ փականների և հանգույցների մոտակա տեսանելի տեղերում, ողջամիտ հեռավորությունների վրա:

5. Վտանգավոր նյութերի կամ պատրաստուկների զգալի քանակությունների պահեստավորման համար օգտագործվող տարածքները, սենյակները կամ պահեստները պետք է նշվեն II հավելվածի 3.2. բաժնում նշված՝ համապատասխան նախազգուշական նշանով կամ նշմարվեն III հավելվածի 1-ին բաժնով սահմանված կարգով, բացառությամբ

այն դեպքերի, երբ առանձին փաթեթների կամ կոնտեյներների պիտակավորումը տվյալ նպատակի համար բավարար է՝ հաշվի առնելով II հավելվածի 1.5 կետը չափսերի առումով:

Այն պահեստները, որտեղ պահվում են մի քանի տեսակի վտանգավոր նյութեր կամ պատրաստուկներ, կարող են նշվել ընդհանուր վտանգ արտահայտող նախազգուշական նշանով:

Վերը նշված ցուցանակներն ու պիտակները պետք է տեղադրվեն, ըստ նպատակահարմարության, պահեստի տարածքի մոտ կամ դեպի այն տանող դռան վրա:

ՀԱՎԵԼՎԱԾ IV

ՀԱՎԱՐԴԵԱՅԻՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԵՂԱԿԱՅՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՒՄՆԵՐԸ

1. Նախնական դիտարկումներ

Սույն հավելվածը կիրառվում է բացառապես հրդեհի մարման նպատակով օգտագործվող սարքավորումների նկատմամբ:

2. Հակահրդեհային սարքավորումները պետք է նշագրվեն սարքավորման համար յուրահատուկ գույնով և դրանց տեղը ցույց տվող ցուցատախտակի տեղադրմամբ, և (կամ) կիրառելով յուրահատուկ գույն՝ ցույց տալու համար այդպիսի սարքավորումների տեղը կամ դրանց մուտքի կետը:

3. Սույն սարքավորումների նշագրման գույնը կարմիրն է:

Կարմիր գույնով ներկված տարածքը պետք է բավականին ընդարձակ լինի՝ սարքավորումները հեշտորեն նկատելի դարձնելու համար:

4. 3.5 հավելվածով սահմանված ցուցատախտակները պետք է կիրառվեն սույն սարքավորումների տեղայնությունը որոշելու համար:

ՀԱՎԵԼՎԱԾ V

ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐԻ ՈՒ ՎՏԱՆԳԱՎՈՐ ՏԵՂԱՆՔՆԵՐԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԵՐԹՈՒՂԱՅԻՆ ՈՒՂԻՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԻՐԱՌՎՈՂ ՑՈՒՑԱՆԱԿՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

1. Խոչընդոտների և վտանգավոր տեղանքների ցուցանակները

1.1. Այն տեղերը, որտեղ առկա է խոչընդոտներին բախվելու, վայր ընկնելու կամ վայր ընկնող առարկաներին բախվելու ռիսկը, պետք է նշագրվեն դեղին և սև կամ կարմիր ու սպիտակ գույնով ներկված շերտագծերով, և դրանք պետք է տեղադրվեն ձեռնարկությունների ներկառուցված գոտիներում, որտեղ աշխատողները կարողանում են մուտք ու ելք անել աշխատանքի ժամանակ:

1.2. Անհրաժեշտ է, որ շերտագծերի չափերը համամասն լինեն տվյալ խոչընդոտի կամ վտանգավոր տարածքի չափերին:

1.3. Դեղին և սև կամ կարմիր ու սպիտակ շերտագծերը պետք է լինեն քիչ թե շատ նման չափսի՝ մոտավորապես 45° անկյան թեքությամբ:

1.4. Օրինակ՝

2. Երթևեկության ուղիների նշագրումը

2.1. Եթե սենյակների և սարքավորումների օգտագործումն անհրաժեշտ է աշխատողների պաշտպանության համար, երթևեկության ուղիները պետք է հստակորեն նշագրվեն տեսանելի գույնով ներկված շարունակական շերտագծերով (գերադասելի են սպիտակ կամ դեղին գույները)՝ հաշվի առնելով գետնի գույնը:

2.2. Շերտագծերը պետք է տեղադրվեն այնպես, որ ցույց տան ավտոմեքենաների ու մոտակայքում գտնվող ցանկացած առարկայի, հետիոտների և ավտոմեքենաների միջև անհրաժեշտ անվտանգ տարածությունը:

2.3. Դրսում ներկառուցված տարածքներով անցնող երթևեկության մշտական ուղիները պետք է նշագրվեն հնարավորինս նույն ձևով, եթե դրանք ապահովված չեն հարմար արգելապատնեշներով կամ մայթերով:

ԼՈՒՍԱՎՈՐՎՈՂ ՑՈՒՑԱՆԱԿՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

1. Բնորոշ առանձնահատկությունները

1.1. Ցուցանակի արձակած լույսը պետք է ապահովի լուսային այնպիսի հակադրություն, որը կհամապատասխանի տվյալ միջավայրին՝ հաշվի առնելով ցուցանակի կիրառման պայմանները, սակայն միևնույն ժամանակ ցուցանակը չպետք է փայլի չափազանց բարձր լուսավորությունից կամ անբավարար լուսավորության պատճառով դժվար տեսանելի լինի:

1.2. Նշան արտահայտող լուսավորվող հատվածը պետք է լինի մեկ գույնի կամ պետք է սահմանված ֆոնի վրա պարունակի գրաֆիկական պատկեր:

1.3. Այդ գույնը պետք է համապատասխանի I հավելվածի 4-րդ բաժնում սահմանված գույների աղյուսակին և դրանց նշանակություններին:

1.4. Նույն կերպ, եթե ցուցանակը գրաֆիկական պատկեր է պարունակում, ապա վերջինս պետք է համապատասխանի II հավելվածով սահմանված համապատասխան կանոններին:

2. Կիրառումը կարգավորող յուրահատուկ կանոնները

2.1. Եթե սարքը արձակում է և՛ շարունակական, և՛ թարթող նշաններ, ապա նշանը պետք է կիրառել շարունակական նշանից ավելի բարձր վտանգ կամ պահանջվող (պարտադիր) միջամտության կամ գործողության ավելի մեծ անհրաժեշտություն արտահայտելու համար:

Թարթող լուսավորվող նշանի յուրաքանչյուր թարթման տևողությունը և թարթումների հաճախականությունը պետք է լինի այնպիսին, որ՝

- ապահովի ճիշտ հաղորդվող նախազգուշացման ընկալումը, և

- շփոթություն չառաջացնի տարբեր լուսավորվող նշանների միջև կամ լուսավորվող շարունակական նշանի հետ:

2.2. Եթե թարթող նշանն օգտագործվում է ձայնային ազդանշանի փոխարեն կամ դրա հետ, ապա պետք է նույնական կոդեր կիրառել:

2.3. Մարդկանց մահացու վտանգ սպառնալու դեպքում թարթող նշաններ արձակող սարքերը պետք է գտնվեն հատուկ հսկողության տակ կամ ապահովվեն օժանդակ լամպով:

ՁԱՅՆԱՅԻՆ ԱԶԴԱՆՇԱՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

1. Բնորոշ առանձնահատկությունները

1.1. Ձայնային ազդանշանները պետք է՝

ա) ունենան արտաքին աղմուկի մակարդակը զգալիորեն գերազանցող այնպիսի ձայնային ուժգնություն, որը լսելի կլինի, բայց ոչ չափազանց բարձր կամ ցավ պատճառող,

բ) լինեն հեշտորեն ճանաչելի, հատկապես իմպուլսի տևողության, իմպուլսների կամ դրանց խմբերի միջև ժամանակամիջոցների առումով և հստակորեն տարբերվեն ձայնային այլ ազդանշաններից ու արտաքին աղմուկից:

1.2. Եթե սարքավորումը կարող է ձայնային ազդանշան արձակել փոփոխական և հաստատուն հաճախականություններով, ապա փոփոխական հաճախականությունը օգտագործվում է ավելի բարձր մակարդակի վտանգ կամ պահանջվող (պարտադիր) միջամտության կամ գործողության ավելի մեծ անհրաժեշտություն արտահայտելու համար՝ կայուն հաճախականության համեմատ:

2. Կող

Տարհանման դեպքում կիրառվող ազդանշանը պետք է շարունակական լինի:

ՀԱՎԵԼՎԱԾ VIII

ՔԱՆԱՎՈՐ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

1. Բնորոշ առանձնահատկությունները

1.1. Խոսողի կամ բարձրախոսի և մեկ կամ ավելի ունկնդիրների միջև բանավոր հաղորդակցությունը պետք է լինի (երբեմն կողավորված) կարճ տեքստերի, արտահայտությունների, բառերի խմբերի և (կամ) առանձին բառերի տեսքով:

1.2. Խոսակցական հաղորդագրությունները պետք է լինեն կարճ, պարզ և հնարավորինս հստակ. խոսողի բանավոր խոսքի ունակությունները և ունկնդիր(ներ)ի լսողական ունակությունները պետք է այնպիսին լինեն, որ ապահովվի հուսալի բանավոր հաղորդակցությունը:

1.3. Բանավոր հաղորդակցությունը լինում է ուղղակի (մարդու ձայնի միջոցով) կամ անուղղակի (մարդու կամ արհեստական ձայնի միջոցով, որը հաղորդվում է համապատասխան ցանկացած սարքերով):

2. Կիրառումը կարգավորող յուրահատուկ կանոնները

2.1. Խոսողները և ունկնդիրները պետք է լավ տիրապետեն կիրառվող լեզվին, որպեսզի կարողանան արտասանել և ճիշտ հասկանալ խոսակցական հաղորդագրությունն ու հետևաբար, առողջության և (կամ) անվտանգության տեսանկյունից համարժեք վարքագիծ դրսևորել:

2.2. Եթե բանավոր հաղորդակցությունը ուղեկցվում է կամ փոխարինվում ժեստերով, ապա կիրառվում են հետևյալ կողավորված բառերը.

-սկսել

ազդարարել հրամանի սկիզբը

- դադարեցնել. գործողության ժամանակավոր կամ վերջնական դադար

- վերջ. կանգնեցնել աշխատանքը

- բարձրացնել. բեռը բարձրացնելու հրաման

- իջեցնել. բեռն իջեցնելու հրաման

-առաջ

-հետ

- աջ

-ձախ

աա)

ուղեկցվում է ձեռքի համապատասխան ազդանշաններով

-վտանգ. կիրառվում է վթարային կանգառի դեպքում

- արագորեն. անվտանգության նկատառումներից ելնելով արագացնել գործողությունը

ՁԵՌՔԻ ԱԶԴԱՆՇԱՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՊԱՈՒՑՆԵՐԸ

1. Առանձնահատկությունները

Ձեռքի ազդանշանները պետք է լինեն հստակ, պարզ, ընդարձակ, կատարելու և հասկանալու համար դյուրին և ձեռքի մյուս ազդանշաններից հստակորեն տարբեր:

Եթե ազդանշանի արտահայտման համար միաժամանակ երկու ձեռքն էլ օգտագործվում են, ապա դրանք պետք է համաչափորեն շարժվեն և արտահայտեն միայն մեկ նշան:

Եթե դրանք բավարարում են վերը նշված պայմանները, ապա կիրառվող ազդանշանները կարող են շատ քիչ տարբերվել 3-րդ բաժնում նշվածներից կամ լինել ավելի մանրամասն. դրանք պետք է լինեն հավասարաչափ իմաստալից և հասկանալի:

2. Կիրառումը կարգավորող յուրահատուկ կանոնները

2.1. Նշաններ ցույց տվող անձը (այսուհետ՝ ազդանշանորդ) պետք է կատարի բազուկների (ձեռքի) շարժումներ՝ ազդանշաններն ստացող անձին (այսուհետ՝ օպերատոր) մանևրային ցուցումներ տալու համար:

2.2. Ազդանշանորդը պետք է կարողանա դիտողաբար հետևել բոլոր գործողություններին՝ առանց վտանգի ենթարկելու իր անվտանգությունը:

2.3. Ազդանշանորդի պարտականությունները բացառապես ներառում են գործողությունների ուղղորդումը և մոտակայքում գտնվող աշխատողների անվտանգության ապահովումը:

2.4. Եթե 2.2 կետում նշված պայմանները չեն բավարարվում, ապա պետք է մեկ կամ ավելի ազդանշանորդներ աշխատեն:

2.5. Օպերատորը պետք է ընդհատի ընթացող գործողությունը նոր ցուցումներ պահանջելու նպատակով, եթե նա ի վիճակի չէ անվտանգության անհրաժեշտ երաշխիքներով իրականացնել ստացվող հրամանները: